

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ԳԱՀԻՐԷ, Ապրիլի փոփոխ
ՄՈՒԿԱԹԱՄԻՐ և ձիւղ ղ/նույ
Pour les annonces s'adresser
à la Rédaction du Journal PHAROS
LE CAIRE — RUE ABDIN
vis-à-vis du «Mokattam»

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Տարեկան	202. 000	100
Վեցամսեայ	»	53
Եռամսեայ	»	33
Տարեկան	»	26
Վեցամսեայ	»	14

ԵՏ ԶԻ ՏՐՈՒԹԻՐ
ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՈՒՂՆՈՒՄ
ՈՒՆԻ Ե ԳՐՈՒԹԻՒՆ

ՓԱՐՈՍ

ԼՐԱԳԻՐ
ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԵՐԵՎԱՆԻ, ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՒ ՀԱՐԱԹ ՕՐԵՐԻ
ՏՃՈՐԵՆԻ—ԽՈՐԱԳԻՐ Յ. ԱՂՓԻԱՐ

ԽՆԱՅԵՑԵՔ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ

Իբրև թէ բաւական չլրացին այն խել մը
ներքին երկպառակութիւնները, կոխները,
անհամաձայնութիւնները, վէճերը, գնահատեալ
աղետաբեր պայքարները, որոնք այնքան
սուղի նստած են մեր ազգին ի սկզբանէ
ի վեր, և որոնք մեր նկարագրին ամենէն
տղեղ մէկ կողմը կը ներկայացնեն. իբրև
թէ բաւական չլրացար տեսնել մեր եպիսկոպոսները,
առաջնորդները, վարդապետները,
քահանայները, աշխարհականները, չափաւոր
հասարակականները որ զիրար կը բռնկե-
տեն, զիրար կուտեն և իրարու չեն հաւ-
նիր, զիրար չեն քաշեր և այսպէսով ար-
գելք կ'ըլլան մեր ամենուրեք դարգացման,
յառաջդիմութեան և վերջապէս ազգին բա-
րեւելութեան. իբրև թէ բաւական չլրացին
մեր թաղականի, վարժապետի, տիրացուի
խնդիրները որոնք մեր ժամանակը կը փը-
ճացնեն և մեր ոյժերը կ'սպառեն, այս-
նի մը ամէն ի վեր դժբաղդօրէն մեզի տըր-
ւած է ականատես ըլլալ ցաւալի տեսարա-
նի մը որուն զլուստը գերբեր կը կատա-
րեն մեր դպրոցական աշակերտները, մանչ
ու աղջիկ:

Խօսքս Գահիրէի Գալստեան վարժարա-
նի աշակերտաց վրայ է:
Այն օրէն ի վեր որ վարժուհիի խնդիր
մը մէջտեղ նետուեցաւ, — ինչոք մը՝ որուն
վրայ մեր տեսութիւնները ընել աւելի ուշի
վերապահած ենք — երկու մանրանկար
կուտը բանական և ունեցանք որոնց մէջ
ուրիշ տարբեր տողներ և նոյն տա-
րիքը ունեցող աղջիկներ, իրենց բարեպը-
տուղ հայրերուն օրինակին հետեւելով, ի-
րենց ալ իրենց «բառի» ունեցան, իրենց
«աշայ» ինչպէս պիտի ըսէր մեր լուսահոգի
բաժանորդը:

Այդ դժբաղդոյ կողմարարները, որոնց
տարբերիցները ուրիշ ազգերու մէջ «պիւն»
և «պէպէք» խաղալով կ'անցնեն իրենց պա-
րագի ժամերը, հայրիկին տուած և մայրի-
կին կրկնած հրամանին վրայ զլուսի վեր-
ցունելով կուտի զրօշը պարզած են իրենց
անօրէնին, հոգաբարձութեան և նորեկ վար-
ժուհիին դէմ:

Այդ տեսարանը շատ սիրուն պիտի ըլ-
լար եթէ զձգէին, անգութ և աղէկտուր բան
մը չունենար իր մէջ:

Աստուած առատօրէն և ուղիւստէն աւելի
մեզ տուած ըլլալով «հակառակորդ» զերբ
կատարող անհատներ, կը զարմանամ թէ

կան տակաւին ծնողքներ որ այս անպա-
տեհութեան, այս դժբաղդութեան, այս ա-
ղէտին հասուցած չարիքը բաւական չի սե-
պելով, իրենց զաւակներուն մատաղ սրը-
տին և մաքուր հոգւոյն մէջ կը ցանեն ա-
տելութեան սերմը, անօրինապահութեան
հոնտերը, փոխանակ ներշնչելու անոնց բա-
րիկն գիտակցութիւնը, միտքեան սէրը, հաշ-
տութեան ոգին և պարտաճանաչութեան ըս-
կըզբունքները:

— Եթէ, հոգաբարձուները զան ևն, ու-
րի մ'իկար:

— Քա՛, նոր վարժուհիին կէմէ գայ ևն,
դասը մի սորվիր:

— Եթէ, մինչև Տիգրան փաշան գայ ևն,
դպրոց մ'երթար, հէ՛յն տեսնենք սըվոր
սովը ինչ պիտի ըլլայ:

— Քա՛, նոր վարժուհիին էրեւր ըտո՛ւր
կը բա՛ կոր, է՛յն էր բա՛ կոր ևն ինծի
խապար տուր:

Աստուգ են, հաւատացէք, այն պատուե-
րներ որ մեր ծնողքներուն շատերը իրենց
զաւակներուն կուտան առտուն դպրոց գա-
ցած պահերուն, եթէ երբեք կերթան:

Այս միջոցին մեր դպրոցական տղաքը
«գործադու» կընեն կոր, չի մոռնանք:

Ես չեմ գիտեր ասկէ ողորմելի վիճակ
մը, ասկէ աւելի ծանր անկում մը: Մեր
ապականեալ բարքերուն անանկութիւնն է
այս:

Կը հասկնամ որ ծնողք մը համամիտ չի
գտնուի հոգաբարձութեան մը և կամ տնո-
րէնի մը տուած մէկ որոշումին, ամեն իրա-
ւունք կուտան նաև իրենց՝ բողոքել կա-
տարուած անիրաւութիւններու դէմ. նոյն իսկ
կը ներքեմ իրենց միջամտել վարժարանի մը
ներքին գործերուն եթէ ասոնք չեն համա-
պատասխաներ ընկալեալ սովորութիւններու
և կամ համաձայն չեն արդի մանկավար-
ժական դրութիւններուն: Չեմ կարծեր որ
արգելք ալ դրուի որ մարդ այս ինչ վար-
ժապետին և կամ այն ինչ վարժուհիին հա-
մար մասնաւոր համակրութիւն մը ունենայ
և ուզէ որ այս ինչը պաշտօնավարէ և կամ
այն ինչը պաշտօնանկ ըլլայ:

Այս ամենը ամեն տեղ և ամեն ժամա-
նակ տեսնուած բաներ են և պիտի տեսնուին:

Բայց ինչ որ այլանշան է, սոսկալի և
զատապարտելի այն ալ իմականակած ծնողք-
ներուն այն տղեկ քաջալերութիւնն է զոր
իրենց զաւակներուն կուտան, պատուիրելով
որ չի յարգեն իրենց ուսուցիչները, չի հա-
մակերպին դպրոցական օրէնքներուն և ըլլ-
տի ընթացք մը ունենան հանդէպ դպրո-
ցական իշխանութեանց:

Յերիւրուած պատմութիւն մը չէ այս որ
կ'ընեն, իրողութիւններ են որոնց ականատես
եղած են և որոնց արձագանքը մինչև մեր
խմբագրատունը հասած է վստահելի աղ-
բիւններէ:

Ասկէց տաս օր առաջ միթէ չի տեսաք
ապստամբ երկսեռ աշակերտներու խումբ մը
որ, մրցանակաբաշխութեան պահուն, ան-
շատ իրենց ընկերներէն, եկեղեցւոյ գաւի-
թին մէջ համախմբուած, անցած դարձածին
վրայ խնդարու ձև մը ունէին և սպանա-
լիքի պէս բան մը կար իրենց աչքերուն
մէջ ու թունալի ժպիտ մը շրթներուն վրայ:
Սակայն փոքրիկ տղաքներ էին ատոնք
որոնց տրուած էր սատանայի դերը կա-
տարելի մեծ դահլիճ իրենց ծնողքներուն:
Օհ, ոճրագործները...:

Դուք ձեր մէջ ըստ իրենց կազմեցէք,
եթէ ատկայ հաճոյք կը պատճառէ ձեզի.
այս կամ այն վարժուհի ուղեցէք, եթէ ձեր
պատճառները ունիք, հոգաբարձութեան մի
հաւանք եթէ ձեր համոզումն է այս, բայց
յառաջ Աստուծոյ մի վարակէք ձեր զա-
ւակները, մի տաք անոնց ատելութեան,
նախանձին լեզու—անուշ համը, մի ուրիշ-
ցընէք անոնց անհնազանդութեան ճամբան,

Ձեր գործը դուք զետեք, տղաքը պէտք
չէ որ նոյն իսկ կուսնէ թէ գէշ հոգաբար-
ձութիւն մը կարող է գոյութիւն ունենալ,
անոնց համար վարժուհիին գէշը ըլլալու
չէ: Այդ պղծիկ ուղեգնորդ մէջ մի ներար-
կէք սե, թունաւորիչ սեւօւնը, թող տուէք
որ մեծնան պարտաճանաչութեան, օրինա-
պահութեան, սիրոյ և համակերպութեան
միջոցաւոր մը մէջ:

Սիրվեցուցէք անոնց յարգել մեծերը, սի-
րել իրենց հաւատարմ և զմայ իրենցմէ վար-
դանուորներուն վրայ:

Ճշմարտապէս ըրիտաւորեալ և ինքնիշխան
գիտակցութիւնը ունեցող ծնողքներու պար-
տականութիւնն այս պէտք է ըլլայ:

Ձեր ատելութիւնները, ձեր կոխները
զպրօքի պատերէն դուրս պէտք է յազդող
գտնեն, ձեր սե զայրոյթը անոր սեմէն ներս
պէտք է անցնի:

Վարժապետները, հոգաբարձուները,
վարժուհիները կրնան իրարու յաջորդել,
բայց պէտք է որ ձեր տղաքը պարկեշտ
մնան, անգիտակից ձեր կրքերուն և հե-
ռու ձեր աղտոտ միջավայրէն:

Իրաւ, ատոնք ձեր զաւակներն են և
դուք կը խառնուիք անոնց, սակայն պէտք
չէ մոռնալ թէ ձեր զաւակները ըլլալէն ետ-
քը, ապագային հայրը պիտի ըլլան անոնք
և յիշեցէք թէ մեր ազգը աղիւս, պարկեշտ
բարի քաղաքացիներու շատ պէտք ունի:

“ԽԱՒԱՐԵԱԼ, ՄԸ (ԻՐԱԿԱՆ ՅԱՆՔԷՋԻ)

(Շար. Յախորդ թիւէն և վերջ)

«Քննէ աղէկ չլրացին խնդացի» Համար-
ձակ կատակաբան մըն էր Գաբրիէ Աղան,
ընտանեկան ալ բարեկամ, որուն «ձեռքը
մեծցած էր» ինչպէս կ'ըսեն: Կարելի էր
«առնուիլ»:

— Մէկ երկուք երեք ըսեմուս պէս սկը-
սանք գործի, տեսնաս ինչ ճանճով, ինչ
իշխումով... Հա՛ պապա՛մ, գործ բան չու-
նիս ո՛րէ գնա՛ եկուր, դէ՛ր վերցուր, սիրտ
հատցուր, դրամ խարճէ, յոգնէ՛, ըրտնէ՛,
պաղէ՛, սուտ չի խօսիմ, քաւում երկու
շաբաթ շոգնաւի ետեւ պտտեր ենք, վա-
րձ չի մնաց քի չերթայինք, չի տեսնայինք,
չի ընկէինք, չի սակարկէինք... Աս շատ
պղտիկ էր, մէկալը մեծ էր, աս ուղի էր,
միտին գոյնը աւելոր չէր. ասոր պաճաճ
քե՛ք երկան բարակ բան մըն էր. ընկնէ՛ս
ետքը պարէ խոյսալ բան մը ըլլայ քի
ամէն մարդ մատ խաժա՛ կըսէինք: Կարճ
կապեմ, խաբարան ճօրճիին վախճօրին խա-
բար տուինք, անունը Բալիփօս, կոկիկ շո-
գենաւ մըն էր, մէկ պակասութիւն մը ու-
նէր, մախիւն կէս մէջքէն վեր շոգենա-
ւին մէջն էր, դարձած ատենը սոսկալի
կերպով կը խոկար, գիտես քի զլուստ մէ-
ջը կը բանէր կոր. — Ասում, ըսինք, ժողո-
վրդին ըստ իրենց, մուկեքա՛, երգերը,
կեցցենք ինչպէ՛քս է կը խափանեն աս
ձայնը:

Սկսանք մեր Գալիփօսն շտկել շտկուել.
Հա՛ մոռցայ ըսելու, 30 ոսկի բռնեցինք:
Ելայ օր մը խոշոր խայրիով մը Պէյքօզ
գացի քի քե՛մէնի տալ ժողովը տամ:
Աստուրէն մինչև իրիկուն էլու պէս աշխա-
տեցայ. իրիկունը լիւս մը քե՛մէնի տալ
բեռնուցինք խայրիւր. խայրիւրին տե-
ղը միտակ բաց մնաց. ես ալ ստիպուեցայ
լերան քե՛մէն թափել. վա՛ շունշանդի,
ձոփ ալ տալայդ, մենք սկսանք տալ
կալիսի/իշխի... Ժօ՛, աս ինչ է, վար
պիտի իյնամ, մէյմը մէկ կողմ, մէյմը միւս
կողմ կը նետուիմ... քե՛մէն պիտի բըռ-
նեմ, բռնուելիք բան չէ քի, քեզի հետ վար
կուգայ... մենք սկսանք ճանաչուցուեան,
իյնալս մաղէ մը կախուած էր... Երկան
չի բշեց, զօռչու տալայ մը վրայ հասաւ,
մաղը փրթաւ, ծառայական պալ քե՛մէն
կորսնցնելով «ճօմպ» տէյի ծովը ինկայ...
Սահմանադրութեան սիրուն...
Սահմանադրութեան կենացը, ըսաւ Գաբ-

Գ. Է. ՄԷԼ ՎԱՃԵԱՆ

ԳԱՀԻՐԷ — ՄՈՒՍԳԻ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԺԱՄԱՅՈՑՈՑՆԵՐՈՒ. ԳՈՀԱՐԵՂԻՆԱՅ ԵՒ ՖՈՆՕԿՐԱՑՆԵՐՈՒ

րիւն Ալա, օդին մնացորդը կու տալու և երկրորդ գաւաթ մըն ալ ապարկելով:

—Ինչ, ծովը ինկար, իրաւ, ըսի և բաճարէ մըն է փրցուցի: Ինչո՞ւ այս տե- սակ արկածները կը խնդացնեն չիյտեմ:

—Դող մ'իջար, չի խղցուցայ, ըսաւ Գարրիէ Ալա բարեմիտ հեգնութեամբ մը: Լոյսը գիտեմ, Սարը-Եարցի ենք, գիտես ես', աւելցուց հպարտութեամբ, խայրելը կեցուցին մարդերը, ես ալ լողալով մօտե- ցայ, ֆիւրեմ երկնցուցին, վեր բաշցին: Ալ զուն իմ ֆիւրեմներս մօտիկ ընկու էի... քանի ֆիւրեմ պարպեցի շտապել չիյտեմ... հանուցանք Տէ խաղիւններուն տուած ազոտոտ լաթերը հագանք: Աս մէկ... Հե- տեւեալ օրը շոգնաւոր շտկելու ձեռք զար- կինք: 4 օր ոտքի վրայ անցուցին, վայր- կեան մը շնք հանգչեր, «խօլա՛յ» գործ է, աղբա՛ր. ահագին շոգնաւ, մաքրելու, սըր- բելու, զարգարելու է. ամեն դի ծաղիկներ, քեմէնէի ծաղիկ, մեծ ու պղտիկ զրօշակ- ներ. ամեն տեղ ծաղիկներով ու քեմէնէ- ներով գրուած «կեցցէ՛ Ալա ու Սահմա- նագրութիւն, կեցցէ՛ Սէր և միութիւն, Եղ- բայը ենք մենք, կեցցէ՛ լուսաւորութիւն», ինչ գիտեմ, քաղաք մը խօսքեր. 2'եր- կընցնեմ, եկա Մայիս 24ը, շոգնաւորները լեցուցան. խուճով Պէյքօզ գացինք. տես. նալու էր Պէյքօզին խաղիկներ տեսարանը. շոգնաւորներուն, խաղիկներուն, լաւնալ- ներուն հաշիւը չի կար... ան ինչ բազ- մութիւն, ան ինչ իրարանցում, ինչ ու- րախութիւն, ան ինչ պոռալ կանչերներ էին. չէ՛ շիտակը, ան ատենը ուրիշ բան էր, գիտես ֆի ուրիշ հով մը կը փչէր կոր, Հայերուն վրայ ոտակ պաշխաւ զգացում մը կար, մասնա՛յ ըսեմ, անակ բաշխութիւն, մը, յոյս մը կար... Հայ ենք Տէյի պար- ծնալու հիշել մը սենեկն... ցալալըները գուր բան մը չի տեսար Սահմանագրու- րէն:

—Յօդուած ու վիճարանութիւն միայն, մեծագի թիւն տակէն:

—Աս օրը մինչև իրիկուն աշխատե- րէն, Սահմանագրութիւն չըրինք ատ օրը. հոկէ, կարգադրել, շոգնաւոր մարդիկը մին- չեւ եկեղեցի տանիլ, ճաշին, «Ռոզիֆային», պարերուն մոխրայէթ ըլլալ, նայիլ ֆի պակասութիւն մը չըլլայ, ֆայցօ բան մը չի պատահի, հոս վաղել հոն վաղել, ամե- նուն ալ խօսք հասկցնել, ամեն տեղ հաս- նիլ, արիւն-բարեկէ մոնալ, տոքնալ, պա- ղիլ, նորէն տաքնալ, նորէն պաղիլ, իշթէ

անօրուան Սահմանագրութիւն մը քաղաք... բայց յոյս մը ունէինք որ հիշ չէ նէ ծայրը վաստակ մը կար... Իրիկուն եղաւ. մենք նորէն պանտա մօղիքները, զրօ- շակները, երգերը կեցցէնքը առնելու, ե- տեւեալ, բոլորին ձգած՝ կեցցէնքով իս- կէլ զարձանք. հոն տեղ շատ մը մարդեր շոգնաւոր ատենը պիղծեցին գինը 100ին 50 սքօնթօ ընկու. պաշխալ մալ. քանի ծախս ֆէւր է. Տարին տեղերին յանձ- նեցինք ամենքն ալ. Շոգնաւոր պարպու- ցաւ, առաջ մեկ կար ներքը, հիմա ճիւղի ճիւղի... մնացինք ես իշթէ Գրիգոր Ալան.

—Է՛, Գրիգոր Ալա, ըսի, սանկ եկո՛ւր նայինք ինչ մնաց ձեռքերին. Գրիգոր Ա- ղան նայեցայ քի բէք խնդում երես չէր. քիթը կակեր էր գիտես քի. —Խե՛ր ըլլայ, ինչ է ան, Գրիգոր Ալա, ըսի. —Ինձի անանկ կուգայ կոր ֆի փառաւոր տեսակէն խաղըխի մը վրայ նստեցանք... մեր հոգուն համար աշխատեցանք ալլալիս: Եւ... Մո- մին լոյսովը սկսանք ճիւղալի. ամենը ա- մենը ծողկեր էինք: 35 օսկի 37 զրը. 10 փարայ... Է՛, մենք ինչ խարճեր էինք. մենք ալ խարճեր էինք 35 օսկի 20 զրը. վաստակածին էր 37 զրուշ 10 փարայ, վայ շունչանքի. ծօ՛ հապա մեր երկու շարաթուան օրականները, մեր աշխատու- թիւնը, յոգնութիւնը, մեր սիրտ հատցնե- ները, հապա իմ ծով ինչպէս, ծօ՛ ասոնց փարան ո՞վ պիտի ցնծար, ըստ անուշիկ Սահմանագրութիւն... 37 զրուշ տաս փարա՛յ, ծօ մեր 35 օսկիին առաջ օր- ուան «Ֆայդ»ը պիղծ չէր... Գրիգոր Ա- ղան կոնակի վրայ պառկեցաւ խնդալէն. ես շիտակ չի կրցի խնդալ... քար կտրե- ցայ մնացի. Երթեալ օրը, խրքաւ, յոգ- նութիւնէս, ըստիկ պաղեցնեմ փառաւոր «սուրէթ»տէն հիւանդ ինկանք.

—Ինչ հիւանդութիւն: —Սասըման. ամիս ու կէս «անկող- նոյ ծառայեցինք», 15—20 օսկի փարա- յէ երանք. քիչ ալ մնաց որ անդիի աշխարհ- քին ճամբան ձեռք առնէինք Սահմանագրու- թեան սիրուն:

30 տարի անցած է արեւս աս ցաւը ներսիդէս ելած չէ, կեանքին մէջը ասանկ եղեկանքներ աշխատած չունէի... ատոր վրայ ֆիւմ ըրի, Սահմանագրութեան մէյ մըն Պէյքօզ չի գացի. մինչև հիմայ Սահ- մանագրութեան անունը կուտան նէ սընկիւ- ներս օտքի կ'իջան պիղծիւն. կերած ա- պուրը նայէ՛, 37 զրուշ տասը փարայ,

հէ՛, ծօ՛, իրաւ կ'ըսեմ, 4—5 օսկի գաւառը ընէի անշափ խրքաւ չէիկալար. հիշ չէ նէ ասոր անոր կը պարծենայի քի 5—10 օսկի փաս քաշեցի Սահմանագրութեան եր- եսէն... աղբին ծառայութիւն մը ըրի, աղբը ինձի պարտականէ, ժալալ... ատ ալ քէֆ մըն է, 5—10 օսկի ծախս կ'առնուի շիտակը, բէք սուղ չէ... Թող Աղբին հա- մար 5—10 օսկի ալ իմ ճեպէս երթայ, ինչ կ'ըլլայ եղբ. ամա 37 զրուշ 10 փարայ վաստակի՛լ, չէ՛, աս չըլլալէ բան է... —Է՛, պարէ՛ քալ ըրիք իրարու մէջ.

—Ինչ բայ պիտի ընեմ... ան ալ Գրի- գոր Ալան կերաւ:

Մ. Ս. ԿԻՐԻՃԵԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ԿԼԵՄԵՆՏ ԳԱՆՈՒԵՒ ԱՂԲԱՏԱՆԱՍ ԵՒ ՈՐԲԱՆԱՍ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ ՄԻՋԵՒԻ 1901 Մայիս Ն. Տ. 28 ին

Յօդ. 1 — Վերադառնալ ընկերութիւններ հանրային ձեռնարկներ՝ այն է վիճակահա- նութիւն, թատերական ներկայացում, նուի- րահաւաքութիւն, պարահանդէս եւն. սար- քելու մասին համաձայնութիւն գոյացուցած են իրենց մէջ պայմանագրիս թուականէն սկսեալ:

Յօդ. 2 — Խորաքանջիւր ընկերութեան Գործադիր Ժողովը երկ երկու պատուիրակ կը նշանակէ իր մէջէն կամ ընկերութեան ուրիշ անդամներէն, որոնք կը կազմեն մար- մին մը «Գահիրէի բարեփառական ընկերու- թեան» թան Յանձնաժողովը՝ անունով, պատ- ուիրակները մէկ տարի կը պաշտօնավարեն և վերընարկի են: Միեւնոյն ընկերութեան երկու պատուիրակները կրնան խնդոյ մը մասին տարակարծիք ըլլալ, բայց ձայները հաւաքուած ժամանակ, որոշումները կը արը- ուին նստին ներկայ անդամոց մեծամաս- նութեամբ, բաւ է որ ներկայից թիւն Յանձ- նաժողովին անդամոց ընդհանուր թիւին կէ- սէն մէկ աւելի ըլլայ, այսինքն եթէ ընդհա- նուր թիւը 10 է, գոնէ վեցը ներկայ կըլլա- ըլլան: Միայն թէ երբ խնդիրն՝ Հիւանդի գրութեամբ վիճակահանութեան վրայ է և ընկերութեան մը երկու պատուիրակները իրարու համակարծիք են, այդ ընկերութիւ- նը ազատ է այդ վիճակահանութիւնն ըն- դունելու կամ մերժելու: Մերժող ընկերու- թիւնն այս համաձայնութիւնէն բաժնուած չ'նկատուիր, միայն թէ չ'մասնակցիր այդ ձեռնարկի ծախքին, շահին ու զէնին:

Յօդ. 3 — Հիւանդի գրութեամբ վիճա- կահանութիւնէն զատ, ուրիշ ինչ հանրային ձեռնարկ որ որոշուի թան Յանձնաժողովի

մեծամասնութիւնով, ամէն ընկերութիւն պարտաւոր է ընդունիլ զայն, եթէ իսկ ըն- կերութեան մը կամ ընկերութիւններու բո- լոր պատուիրակներն հակակարծիք գտնուին այդ ձեռնարկին, որու ծախքն, շահն ու վը- նասը իւրաքանչիւր ընկերութեան հաւասա- րապէս կը պատկանի, շահէն Պոլսոյ Աղ- ցային Պատրիարքարանի որբերու անտուկին բաժին մը հանելով:

Յօդ. 4 — Սոյն, համաձայնութիւնն ըն- դունող ոչ մէկ ընկերութիւն կրնայ ինք ա- ռանձին և ուրիշ ուէ ընկերութեան մը հետ, ըլլայ այս համաձայնութիւնն ընդունող կամ ոչ, հանրային ձեռնարկ սարքել, որ միայն և միայն թան Յանձնաժողովին իրաւունքն է: Զեռնարկի մը հանրային հանգամանք ունենալն կամ ոչ որոշել Յանձնաժողովին ձեռնահասութեան կը պատկանի:

Յօդ. 5 — Հանրային ձեռնարկի մասին հարկ եղած արժօնութիւնը թան Յանձ- նաժողովի միջոցաւ կ'ըստացուի տեղույս Աղցային Առաջնորդարանէն:

Յօդ. 6 — Գահիրէի և Արաբիերու Որ- բասիրաց ընկերութեան նախաձեռնութեամբ ի Սուտան ձեռնարկուած և Ալիսայ Որբախը- նամին նախաձեռնութեամբ յԱմերիկա ձեռ- նարկուած, նաև Վասպուրականի և Արաբ- կիւրու Հոգատարին ձիւղութիւն, շրջակայից ու Հայկէստանի մէջ ձեռնարկելու վրայ եղած նուիրահաւաքութեան արդիւնքը յատ- կացուած է թան Յանձնաժողովի անտու- կին, որ միայն կը վճարէ նոյն ընկերու- թիւններուն սոյն առթիւ բրած ծախքերն, իսկ ի Սուտան արդէն կատարուած և Որբա- սիրաց ընկերութեան անտուկը ասիկ յառաջ մտած զրամին վրայ իրաւունք չունի թան Յանձնաժողովը, որ հետեւաբար՝ նուիրա- հաւաքութեան այդ մասին ծախքը չ'վճարէր:

Յօդ. 7 — Այն նուիրահաւաքութիւնները որ Եզրիպտոսի և Ճիպուտի ու շրջակայից մէջ, Սուտանի և Հայկէստանի մէջ կը կատարուին ուէ անհատի մը ձեռնարկ և Գահիրէ կը զրկուին, կը պատկանին թան Յանձնաժողովը անտուկին, եթէ իսկ հան- դանակութիւնը ի Գահիրէ գործող և այս միա- բանութեամբ մասնակցող ուէ որբախըմ մը ընկերութեան մը անունով կատարուած ըլլայ:

Եթեւայ որբախըմներէն և ոչ մէկը ինք իր նախաձեռնութեամբ կրնայ առանց Յանձ- նաժողովին հաւանութեան հանգամանակու- թիւն կատարել թէ այս յօդուածին մէջ նշանակուած տեղերը և թէ ուրիշ տեղեր, եթէ ուէ անհատ մը ինքնաբերաբար Ե- զրիպտոսէ, Սուտանէ Հայկէստանէ և Ճի- պուտիէ զուր տեղէ մը հանգամանակութիւն

ԹԵՐԹՕՆ «ՓԱՐՈՍ» Ի (12) ԺԸՀԱՆ ՏՆՎՐԷ

ԲՐԷՆԱ ՄՈՒՐԱՏ

ԵԳԻՊՏԱԿԱՆ ՐԱՐՔԵՐԷ ՆԵՐՇԵՂՈՒՄՈՎ ՎԷՊ

ԳԼՈՒԻ Գ.

Գալով Սթա Ապոհայի, մինչև այս օրս բնաւ չէր եղած մէկը գոր Ժերմէնի չափ սի- րած ըլլար. բնաւ և ոչ մէկ կնոջ վրայ չէր տեսած այդ գաղտ հրապոյրը, այդ անկեղծ նայուածքը, այդ ջիւշ ձայնը՝ որ հեշտալի երաժշտութեան մը պէս սիրտը կը վրդովէր: Եւ ինչպէս որ համակ բնագիտելով յերբեր- ուած վայրենի աղջկանը մէջ՝ ատելութիւնը վայրագ, անողոր ի յայտ կուգար, նմանա- պէս ալ, Ժերմէնի հանդէպ, անձնատուր

կ'ըլլար անոր իրեն ներշնչած խանդավա- ութեան և աղապատանքի հոսանքին:

Ժերմէն ինքն ալ հետզհետէ աւելի կը յանձնէր ինքզինքը և կը զրաւուէր իր փոք- րիկ բարեկամուհիին սրտազեղումներէն:

Պէտք եղաւ որ անոր պատմէ իր պատ- մութիւնը, իր կեանքին գլխաւոր դէպքերը, ու միշտ, ամեն մէկ զարգարին, Սթա Ա- պոհայ, երկակայութեան ալ աւելի հետա- քրքրուելով, իր բարակ ձայնովը կը գոչէր. «Տակաւին, տակաւին ևս պատմէ»:

Այսպէս՝ զիշերը վրայ հասաւ:

Ժամը եօթնին ատենները ափսէի մը վրայ զրած բերին դաստիարակութիւն ճաշը. յաջորդ օրը աշակերտութիւններուն հետ պի- տի ճաշէր: Ափսէս գրուելով փոքրիկ սեղա- նի մը վրայ, որմէ լայն կուգար ամեն կող- մէ, Սթա Ապոհայ կերակուրները բացաւ:

—Տեսէք օ՛ն, ինչ ալ աղւոր բաներ բե- րեւ են ձեզի, ըսաւ որբամուկութեան ժպի- տով մը թարմ շրթունքներուն վրայ, և փա- ղաքուշ կերպով հարցուց:

—Կ'ուզէ՞ք որ այս առտուան պէս ես հրամայեմ:

—Ոչ, ինչո՞ւ... մէկտեղ կ'ուտենք: Երկուքն ալ ափսէին շուրջը նստան, ու ճաշը սկսաւ... Ահ, պանդուխտութեան մե- լամաղձօտ, տիրաբո՛յր ճաշը... Առաջին պատահաններուն, Ժերմէն պարտաւորեցաւ կանգ առնել, սիրտը եղած. ձեռքերը գոգ- գոջուն, աչքերը լի արցունքներով գոր ի զուր արիւթեան յամառութեանը մէջ՝ կը շանար զսպել:

Վասն զի ամեն բան նոր, ու տարօրի- նակ ալ էր, իրեն ատշնջ զրուած միակ պը- նակէն, ափսէին կանաչալոյս լայնութեան մէջ կորսուած պատառաքողն ու զանակէն

սկսեալ... մինչև արաբական երկուքի կը- տրուած հացը, որ ուսուսուորող սեւամորթ աղախինին երեսին նման տափակ, գորշ ու կակուղ էր, և ինչ այլանդակ կերակուրներ: Զամանի համեմանքի մէջ լողացող պղտիկ պղտիկ կտրուած աղանդներ, կարագով ե- փած մըլոշի տերեւներ, պամիսայով շրջապատ ուած ոչխարի գլուխ մը, ու յետոյ, ապու- րին ու աղանդներուն, ոչխարի գլուխն և մո- լոշին մէջտեղը երկու երեք անուշեղէն:

—Միթէ անօթի չ'էք, հարցուց Սթա Ա- պոհայ, որ կը լափէր:

Անօթի չ'էր մի... Ինչպէս չէ, շատ ալ անօթի էր, խեղճ Ժերմէն, բայց կերակու- րին նորութիւնը արտօնակը փախցնելու առ- տիճան զինքը կ'ապշեցնէր: Այսպէս զինքը գոր- շանք մը, նոգկանք մը կը զգար այդ բոլոր թացահամեմներէն, այդ հալած կարագէն, այդ իրեն անծանօթ համեմներէն, և ա-

Գ. ԵՒ Կ. ՄԵԼՔՈՆԵԱՆ

ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆ ԾԽԱԽՈՏԻ ԵՒ ՍԻԿԱՐԷԹՆԵՐՈՒ

ԳԼԽԻՒԵ, ԳՈՐԾԱՐԱՆ ԹԵՎԵԻԹԵԹԷ — ԳԼԽԻՒՈՐ ՎԱՃԱՌԱՏԵՂԻ ՆԱԿԻՆ ԶԱԲԹԻԹԷԻ ՇԵՆՔԷ

Մ Ո Ւ Ջ Ո Ւ Ա Ն Լ Ա Յ Յ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ, ՆԻՒ-ԵՈՐՔԻ ԱՄԵՐԻԿԱՆ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՑՈՒՄ 1843 ՎՅ

ՊԱՀԵՍՏԻ ԳՈՒՄԱՐ ՄԵԿ ՄԻԼԻԱՌ 563 ՄԻԼԻՈՆ 961 ՀԱՋԱՐ ՅՐԱՆԲ

Ապահովագրական ամեն կերպի դրույթները կը գտնուին իսկական ապահովագրութիւն, ամբողջ կեանք, զաւակաց դրամագլուխ, ցմահ եկամուտ, եւայլն

ՄՈՒՋՈՒԱՆ ԼԱՅՅԻ սակագինը և ապահովագրութեան դանազան գրութիւնները չուսումնասիրած մի ապահովագրութիւն. — Առատուհնուն պայմաններ
Տեղեկութեանց համար գիտել ի Գահիրէ առ Պ. Ն. ԲԻՐՁԻՍ և Ժ. ՎԱԼԵՆԻՆ, Ընդհ. ներկայացուցիչք:
Աղէքսանդրիա Անթ. Թ. ՌԱԼԻ, գլխաւոր գործակալտար: Գ. ԵԿԱՒՈՅ ԴԵՐ-Գործակալ և Գահիրէ

ԳՐԻՏԻ ԼԻՕՆԵ

ԱՆՔԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԴՐԱՄԱԳԼՈՒԻ 200,000,000 ՅՐԱՆԲ

ԳՐԻՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՆԳԻՊՏՈՍ
ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ-ԳԱՀԻՐԵ ԲՈՆ-ՍԱՅԻՏ

ԳՐԻՏԻ ԼԻՕՆԵՆ կ'ստանձնէ ամեն տեսակ սեղանաւորական գործողութիւններ, ինչպէս փոխառութիւն արժէքաւոր թուղթերու վրայ:

Ընթացիկ հաշիւներ կը բանայ արժէքաւոր աւանդներու վրայ:

Յրանգայի և օտար երկիրներու վրայ կ'ուստայ չէքեր, փոխանակագրեր, և վարկադրեր:

Կը գանձէ եգիպտոսի և արաւ-սահմանի վրայ քաշուած փոխան-կապեր:

Աւանդ չգումած գրաւներուն փո-խարէն կանխորոշ պայմանաժամով մուրհակներ կ'ուստայ:

Ռ Ո Ւ Ս Ա Կ Ա Ն ՇՈՒԹԵՆԱԻՍՏԻՆ ԵՒ ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԹՂԹԱՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԻՐ ԵՐԹԵԻԿՈՒԹԻՒՆ
Ի յէ՛ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ, ԲԻՐԵԻ, ԲԶՄԻՐԻ, Կ. ՊՈԼՍՈՅ, և ՕՏԷՍԱՅԻ
Հետեւեալ նոր և առաջնակարգ շոգենաւորով

ԱՆԲԸՐԸՐ ՆԻՔՈԼԱ. արդթ. թօն. 5500	2ԻՍԱՂՅՈՅ տարողութիւն թօն 5500
ԲԷՆ ՕԼԿԱ. " " 5500	2ԱՐ " " 5500

ՇԱՐԱԹԸ ԱՆԳԱՄ ՄԸ կանոնաւոր մեկնում Աղէքսանդրիայէն դէպ ի Օտէսա, հանդիպելով ԲՈՒ ՍԱՅԻՏ, ԻԶՄԻՐ, ՏԱՐՏԱՆԷԼ և Կ. ՊՈԼԻՍ ուր-կէ անմիջական հաղորդակցութիւն ընկերութեան այն շոգենաւորուն հետ որ ուղղակի կ'երթան ՍԷՎԱՍՏՈՓՈԼ, ՍԵԻ ԾՈՂՈՒ ԱՍՏԱԿԱՆ ԵԶԵՐՔՆԵՐԸ, ԿՈՎԿԱՍ, ԽՐԻՍ և ԱԶՈՅԻ ԾՈՂ:

ՇԱՐԱԹԸ ԱՆԳԱՄ ՄԸ մեկնում Աղէքսանդրիայէն դէպ ի ԲՈՒ ՍԱՅԻՏ, ԵԱՅԱ, ՊԷՅՐՈՒԹ, ՏՐԻՊՈԼԻՍ, ՄԷՐ-ՍԻՆ, ԲԻՈՍ, ԲԶՄԻՐ, ՍԵՒԱՆԷԿ, ՏԱՐ-ՏԱՆԷԼ և Կ. ՊՈԼԻՍ:

ԴԻՍԵԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԵԱՆ
Աղէքսանդրիա, Թիքասան փողոց:

Ա Ջ Դ

Թերթիս բաժանորդագրութիւնը Մանսա-փոսթ ով կամ փոխանակա-գրով պէտք է լրկուի հետեւեալ հասցէին:

Direction du journal PHAROS
LE CAIRE, Egypte

Թերթիս Աղէքսանդրիայ գործա-կալութիւնը Տիար Լևոն Նիզամեան ստանձնած ըլլալով, բաժանորդա-գրութեան և ծանուցմանց համար դի-մել իր վաճառատներին՝ Թէվֆիք փաշա փողոց:

ԼԵԻՈՆ ԿԻՒՄԻՏԵԱՆ

—X—

ՎԱՃԱՌՔՈՒՆ ԺԱՄԱՅՈՅԻ ԵՒ ԳՈՀԱՐԵՎԷՆԵՐՈՒ
ԳԱՀԻՐԵ, Մուսթաֆա փողոց,
Ս. եւ Ս. Սիսմաթի վաճառասան դէմը
Աղբանաց զանազանութիւն
Երաշխաւորութիւն
Աժանութիւն
Ճոխ հաւարածոյ Ամերիկեան և Յրանապահ
Ժոնսկրաֆներու

Ծանօթ: Վարպետ ժամագործ մը յաճա-խորդներու արամագրութեան տակ կը գտնուի:
ԱՅՅԵԼԵՑԷՔ ԵՒ ԳՈՀ ՊԻՏԻ ՄՆԱԲ

ԱՐՄԱՐ
ՄԱՅՈՒ
ԲԱՐԻԶ
1900

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ ՆՈՐԱԶԵԻՈՒԹԵԱՆ
ՏՂԱՅՈՑ ՀԱՄԱՐ
ՀԱՆԴԵՐԱՆԵՐ
ԸՍՏ ՎԵՐՅԻ ՆՈՐԱԶԵԻՈՒԹԵԱՆ
ՅԱՓԱՌՐ ԵՒ ՈՐՈՇԵԱԼ ԳԻՆԵՐ
ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ — ԳԱՀԻՐԵ

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ

Հաստատեալ խորվական հրամանագրով
25 Դեկտեմբեր 1898

Դրամագլուխ	Անգլ. ոսկի 1,500,000
Պահեստի գրամ	" " 193,000

Կառավարել. Սըր Էլվին Բալմէր.

Ընկ. կեդրոն ի Գահիրէ. Մամաճիւղեր.
Աղէքսանդրիա, Մանսուրա, Խարթում:
Եգիպտական Ազգային Դրամատունը կըն-դունի աւանդներ, դրամ փոխ կուտայ և ընթա-ցիկ հաշիւներ կը բանայ ապրանքի և արժէ-քաւոր թուղթերու վրայ:

Կը գնէ և կը վաճառէ արտասահմանի վրայ քաշուած փոխանակագրեր և կը ստանձնէ ամեն տեսակ սեղանաւորական գործողութիւններ:

ԳԺՈՒԱՐԱՄԱՐՍՈՒԹԻՒՆ ԵՒ ՄՐՏԱԽԱՌՆՈՒԹԻՒՆ

Ստամբուլ հիւանդութիւնը շատ անգամ դժուարամարտութիւն, սրտի խառնուրդ, լոբ-մուր, պնդութիւն և փսխում առաջ կը բերէ, ինչ որ հիմնապէս բուժելու համար պիտի է ամեն ճաշէ վերջ ԲԷԿԼԻՍ ՍԱՆԿԻՆԷՐ անուն ազգու-ղէկէն մէյմէի քիչ առնել:

ԲԷԿԼԻՍ ՍԱՆԿԻՆԷՐԸ ուրիշ ալբոլային գե-ղերու նման չի խանգարեր ստամբուր:
Կը ծախուի ամեն մեծ գեղարաններու մէջ:

ԱՌԻՍՏԱՆԿԱՐԶԱՏՈՒՆ ՍԷՏԷՑԺԵԱՆ

ՀԻՄՆԵԱԼ Ի Կ. ՊՈԼԻՍ 1882 թ
ՓՈՒԱՐԵԱԼ Ի ԳԱՀԻՐԵ 1898 թ

ԱԹԱՊԱ-ԷԼ-ԽԱՏՐԱ — ՊԱԶԱՐ-ՄՈՒՐՈՒՐ

Այս ծանօթ լուսանկարչատան մէջ շատ խնամեալ և վերջին դրութեամբ կը պատրաստուին ամեն մեծութեամբ և ամեն տեսակ լուսանկարներ. կոռպիներ և ակրան-սխալնաններ:

Դուրսը առնուելիք լուսանկարներու համար դիւրա-մատելի պայմաններ:

ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ ՄԱՐՈՒԹԻՒՆ
ԱՐՈՒԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ԺԱՇԱԿ
ԴԻՆԵՐՈՒ ԶԱՓԱՌՈՐՈՒԹԻՒՆ

ՔԻՆՏԸԼ ԵՒ ՍԻՍՏԸՍ
Հաստատեալ յամին 1860

ՎԱՅԱԳՈՐԾԷ-ՎԱՅՐԱՅԹԻԶԷ Ն. Բ. ԽՏԻՎԻՆ

Այս նշանաւոր փուլին մէջ կը պատրաս-տուին ամեն տեսակ հացեր, պիսքիւներ, եւ քէյքեր:

Այս փուլին մաշնաւոր կառքեր կը շրջա-դային Գահիրէի ամեն թաղերու մէջ, ինչպէս նաեւ Զէյթուն և ի Հէյլան:

Թէվֆիգիյէ, Պուլաքի ճամբայ. ԳԱՀԻՐԵ